# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**_«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին_**

«29» հունվարի 2024թ. թիվ 5

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի և 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը և «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024թ. հունվարի 17-ի թիվ 5 արձանագրության 1.2.-րդ կետը

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ | 00522502 | ք. Երևան, Երկաթուղայիններ 4փ 2/6 | 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ չափաբաժինների | - | - | «29» հունվարի 2024թ. թիվ 5 որոշում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | մասով «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, մասնավորապես՝ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները: | | | «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52» |

*Սույն որոշման հիմքում առկա («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող) բոլոր փաստաթղթերը հրապարակված* ***են www.procurement.am*** *հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում:*

3. Պատասխանատու ստորաբաժանմանը՝ ապահովել սույն որոշման տրամադրումը ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ կայացման հաջորդող օրը:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ն. ԳԱԼՍՏՅԱՆ**